

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-17

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«21» \_\_\_\_01\_\_\_\_ 2020 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի, որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և և ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արսեն Առաքելյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների և դրանց պոպուլյացիոն առանձնահատկությունների պարզաբանումը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 160,320,100.00 (մեկ հարյուր վաթսուն միլիոն երեք հարյուր քսան հազար հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

## **2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

## **2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝**

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

## **2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

### **3 Ծրագրի ֆինանսավորման չափը**

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 160,320,100.00 (մեկ հարյուր վաթսույն միլիոն երեք հարյուր քսան հազար հարյուր) ՀՀ դրամ:

### **4 Մոնիթորինգ**

**4.1** ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

**4.2** Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

**4.3** Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

**4.4** Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

## **5 Վճարման կարգը և ժամկետները**

**5.1** ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

**5.2** ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## **6 Կողմերի պատասխանատվությունը**

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## **7 Պայմանագրի գործողության ժամկետը**

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## **8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **9 Եզրափակիչ դրույթներ**

**9.1** Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Հ/հ 900011024115,

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝

  
(ստորագրություն)



Ծրագրի գիտական ղեկավար՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության

ինստիտուտ


ք. Երևան, Հասարթյան 7

ՀՎՀՀ 00008732

Հ/հ 900018005273

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրեն՝

  
(ստորագրություն)

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ



(Արսեն Առաքելյան)

Հավելված N 1  
« 21 » 01 20.. թ.  
N 00-17 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Արսեն Առաքելյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 21 » 01 20..թ. N 00-17 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 160,320,100.00 (մեկ հարյուր վաթսուն միլիոն երեք հարյուր քսան հազար հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

Նախագահ՝

*Ռ. Մարտիրոսյան*  
(ստորագրություն)

ՌԱՐԻԿ ԱՄՄՏՐՈՍՅԱՆ



Կազմակերպություն

Տնօրեն՝

*[Signature]*  
(ստորագրություն)

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների և դրանց պոպուլյացիոն առանձնահատկությունների պարզաբանումը» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում, ինչպես նաև մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների և դրանց պոպուլյացիոն առանձնահատկությունների պարզաբանմանն ուղղված ընթացիկ հետազոտություններ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Գիտական աշխատանքների համար կոմունալ պայմանների ապահովում, պլանավորված հետազոտությունների պատշաճ իրականացում ֆինանսավորմանը համարժեք ծավալներով: Ստացված արդյունքների ամփոփում գիտական հոդվածների և գիտաժողովների նյութերի տեսքով:

4. Աշխատանքի բովանդակությունը:

2020 թ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանմանն ու զարգացման ծրագրի հայտով ՄԿԻ-ն ներկայացրել էր 355846.56 հազար դրամի (ներառյալ՝ ԱԱՀ) հետազոտական ծրագիր, որը նախատեսված էր հետևյալ հիմնարար և կիրառական հետազոտությունները.

- Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանումը
- Պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրություն
- Բնական և սինթեզված ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտություն
- Կրծքագեղձի ժառանգական քաղցկեղի մատչելի կանխորոշիչ թեստ-համակարգի մշակում:

Սակայն ՄԿԻ-ի 2020 թ-ի պետական բյուջեով բազային ֆինանսավորման ծավալը հաստատվել է 160320.1 հազար դրամ (ներառյալ՝ 11,000 հազար դրամ նվազագույն աշխատավարձի փոխհատուցումը), ինչի հետևանքով նախատեսված հետազոտությունները ամբողջ ծավալով իրականացնելու ինստիտուտի հնարավորությունները խիստ սահմանափակվել են: Ուստի 2020 թ-ի բազային ֆինանսավորման հայտում ներկայացված աշխատանքների

շրջանակը և հաստիքացուցակը համապատասխանաբար վերանայվել են՝ ելնելով հաստատված ֆինանսավորման ծավալից: 2020 թ-ին նախատեսվում է.

- Գիտական աշխատանքի համար պատշաճ կոմունալ պայմանների ապահովում
  - ապահովել էլեկտրաէներգիայի, ջրի, ջեռուցման անխափան աշխատանք, սարքերի աշխատանքային վիճակ՝ ընթացիկ հետազոտությունների և դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար
- Իրականացնել մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների պաթոմեխանիզմների պարզաբանմանն ուղղված հետազոտություններ և պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրություն, որը ներառում է՝
  - ստացված տվյալների վերլուծություն
  - կենսաինֆորմատիկական հետազոտություններ
  - հոդվածների պատրաստում
  - միջազգային և տեղական գիտաժողովների մասնակցություն
  - միջազգային և տեղական գիտական համագործակցության ամրապնդում և համատեղ հետազոտությունների իրականացում
- Այլ գործունեություն
  - միջազգային և տեղական դրամաշնորհային նախագծերի ներկայացում
  - հոդվածների, դրամաշնորհային հայտերի փորձագիտական գրաքննություն (peer-review)
  - ՀՀ կառավարության գերատեսչությունների ներկայացրած նախագծերի ոլորտային փորձագիտական կարծիքի տրամադրում
  - երիտասարդ կադրերի մասնագիտական հմտությունների կատարելագործում

### **Ակնկալվող արդյունքներ՝**

Ծրագրի իրականացման արդյունքում ստացված գիտական աշխատանքների արդյունքները և ձեռքբերումները զեկուցվելու են միջազգային և հանրապետական գիտաժողովներում, ինչպես նաև հրատարակվելու են գիտական հոդվածների, դիպլոմային աշխատանքների, ատենախոսությունների, հաշվետվությունների տեսքով:


### **Կատարողներ՝**

Մարդու գենոմիկայի և իմունոմիկայի լաբորատորիա, վար. Ա. Առաքելյան  
Բջջի կենսաբանության և վիրուսաբանության լաբորատորիա, վար. Զ. Կարալյան  
Մոլեկուլային էնզիմաբանության լաբորատորիա, վար. Ժ. Հակոբյան  
Բջջային ակտիվության կարգավորման լաբորատորիա, վար. Գ. Հակոբյան  
Մոլեկուլային գենետիկայի լաբորատորիա, վար. Ա. Սեդրակյան  
Էվոլյուցիոն գենոմիկայի լաբորատորիա, վար. Լ. Եպիսկոպոսյան



Համակարգչային մոդելավորման լաբորատորիա, վար. Կ. Նազարյան  
Մոլեկուլաբջջային իմունաբանության լաբորատորիա, վար. Գ. Մանուկյան  
Կենսաինֆորմատիկայի խումբ, ղեկ. Ա. Առաքելյան  
Բջջային տեխնոլոգիաների խումբ, ղեկ. Ն. Բաբայան  
Բույսերի գենետիկայի և իմունաբանության խումբ, ղեկ. Ք. Մարգարյան  
Մոլեկուլային նյարդակենսաբանության խումբ, ղեկ. Վ. Վարդանյան  
Հակավիրուսային մեխանիզմների ուսումնասիրության խումբ, ղեկ. Հ. Զաքարյան


Կազմակերպության  
տնօրեն՝



(ստորագրություն)

(Արսեն Առաքելյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Արսեն Առաքելյան)

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ \***


«Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների և դրանց պոպուլյացիոն առանձնահատկությունների պարզաբանումը» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Մարդու բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանում	Ուսումնասիրել գենետիկական և էպիգենետիկական գործոնների առոցիացիան մարդու հիվանդությունների զարգացման ռիսկի հետ:	Փորձարարական և տեսական աշխատանք: Տվյալների վերլուծություն և ամփոփում:	Հոդվածներ, դիպլոմային աշխատանքներ, հաշվետվություններ, գեկույցներ:		
2	Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանում	Ուսումնասիրել մարդու (պարբերական հիվանդություն, սալմոնելոզ, քաղցկեղ, դիաբետ) և կենդանիների (խոզերի աֆրիկյան ժանտախտ, հեմոռագիկ տենդ) հիվանդությունների ժամանակ մոլեկուլաբջջային մեխանիզմների խաթարումները:	Փորձարարական և տեսական աշխատանք: Տվյալների վերլուծություն և ամփոփում:	Հոդվածներ, դիպլոմային աշխատանքներ, հաշվետվություններ, գեկույցներ:	08.01.2020 -30. 12.2020	160320,1
3	Պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրություն	Նկարագրել հայկական գենոմը պոպուլյացիոն գենոմիկայի տեսանկյունից: Ուսումնասիրել խաղողի հայկական սորտերի գենետիկական բազմազանությունը:	Տեսական աշխատանք: Տվյալների վերլուծություն և ամփոփում:	Հոդվածներ, դիպլոմային աշխատանքներ, հաշվետվություններ, գեկույցներ:		
4	Բնական և սինթետիկ ալկոհոլի նյութերի	Ուսումնասիրել կենսաբանական ալկոհոլի նյութերի	Տեսական աշխատանք: Տվյալների	Հոդվածներ, դիպլոմային աշխատանքներ,		

\* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել էռասմայակային փուլերով

	ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտություն	ազդեցության մոլեկուլային մեխանիզմները և դրանց կիրառության ոլորտները:	վերլուծություն և ամփոփում:	ատենախոսություններ, հաշվետվություններ, զեկույցներ:		
Ընդամենը						160320,1


Կազմակերպության  
տնօրեն՝



(ստորագրություն)

(Արսեն Առաքելյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Արսեն Առաքելյան)

Հավելված N 4  
 « 21 » 01 20.. թ.  
 N 08-17 պայմանագրի

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

«Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների և դրանց պոպուլյացիոն առանձնահատկությունների պարզաբանումը» ծրագրի

*հազար դրամ*

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	119649,6	19941,6	29912,4	29912,4	39883,2
2	տնտեսական և այլ ծախսեր*	40670,5	12122,4	10167,6	10167,6	8212,9
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>160320,1</b>	<b>32064,0</b>	<b>40080,0</b>	<b>40080,0</b>	<b>48096,1</b>

Կազմակերպության տնօրեն՝

(Արսեն Առաքելյան)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(Տիգրան Կիրակոսյան)



\* Բուժերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առկվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առկվազն 5%-ը

Հավելված N 4.1  
 « 21 » 01 20.. թ.  
 N 0-17- պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Գումունակ ծառայություններ, այդ թվում՝	22816,0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	13000,0
	գազի ծառայություն	7000,0
	ջրամատակարարման ծառայություն	1000,0
	կապի ծառայություն	1300,0
	աղբահանություն	516,0
2	Գույք	0
3	Սարքեր և սարքավորումներ	0
4	Նյութեր	4654,5
5	Գործուղումներ	0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	0
7	Արշավախմբեր	0
8	Հրատարակման ծախսեր	0
9	Շենքային պայմանների բարելավում	12700,0
10	Այլ	500,0
Ընդամենը		40670,5

Կազմակերպության տնօրեն՝ \_\_\_\_\_ (Արսեն Առաքելյան)  
 (ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_ (Տիգրան Կիրակոսյան)  
 (ստորագրություն)



\* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլարջջային պաթոմեխանիզմների և դրանց պոպուլյացիոն առանձնահատկությունների պարզաբանումը» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Առաքելյան Արսեն Արտաշեսի	տնօրեն, լաբ.վարիչ, խմբի ղեկավար, առ.գա	կգթ	202000
2	Ցականովա Գոհար Վասիլի	տնօրենի տեղակալ գիտ.գծով, ավագ գա	կգթ	177000
3	Պոլիխասկո Բորիս Վլադիմիրի	տնօրենի տեղակալ տնտ.հարց.գծով, ազա	կգթ	195000
4	Խաչատրյան Զարուհի Աշոտի	գիտական քարտուղար, ավագ գա	կգթ	150000
5	Կիրակոսյան Սվետլանա Զիվանի	գիտակազմակերպչական գծով խորհրդական	բգթ	100000
6	Մելիքսեթյան Գոհար Հովհաննեսի	կադրերի գծով տեսուչ	կգթ	170000
7	Մարդումյան Սոնա Սերգեյի	տնօրենի քարտուղար-ռեֆերենտ		130000
8	Կիրակոսյան Տիգրան Ազատի	գլխավոր հաշվապահ		202000
9	Կարավարդանյան Աշխեն Վարուժանի	հաշվետար-գանձապահ		120000
10	Հայրապետյան Նարինե Հովհաննեսի	գնումների համակարգող հաշվետար-գանձապահ		180000
11	Հակոբյան Ժան Իշխանի	լաբորատորիայի վարիչ, առ.գա	կգդ	65000
12	Նազարյան Կարեն Բաբկենի	լաբորատորիայի վարիչ, առ.գա	կգդ	93000
13	Եպիսկոպոսյան Լևոն Միքայելի	լաբորատորիայի վարիչ, առ.գա	կգդ	130000
14	Կարայան Զավեն Ալեքսանդրի	լաբորատորիայի վարիչ, առ.գա	կգդ	110000
15	Հովսեփյան Լաուրա Միքայելի	լաբորատորիայի վարիչ, առ.գա	կգթ	50000
16	Մանուկյան Գայանե Փաշիկի	լաբորատորիայի վարիչ, առ.գա	կգթ	125000
17	Սեդրակյան Անահիտ Միքայելի	լաբորատորիայի վարիչ, ավագ գա	կգթ	110000
18	Հակոբյան Գոհար Վլադիմիրի	լաբորատորիայի վարիչ, գիտաշխատող	կգթ	110000
19	Բաբայան Նելլի Սամվելի	խմբի ղեկավար, գիտաշխատող	կգթ	93000
20	Մարգարյան Քրիստինե Սերյոժայի	խմբի ղեկավար, գիտաշխատող	կգթ	120000
21	Վարդանյան Վիտյա Անդրանիկի	խմբի ղեկավար, գիտաշխատող	կգթ	110500
22	Զաքարյան Հովակիմ Սարգսի	խմբի ղեկավար,	կգթ	125000


		ավագ գա		
23	Հարությունյան Ռուբեն Միքայելի	գիտական խորհրդատու, առ.գա	կգդ	62500
24	Կարալովա Ելենա Միքայելի	առաջատար գիտաշխատող	կգդ	50000
25	Այվազյան Վիոլետա Արտաշեսի	առաջատար գիտաշխատող	կգթ	105000
26	Ներսեսովա Լյուդմիլա Ստեփանի	առաջատար գիտաշխատող	կգթ	110000
27	Կծոյան Ժաննա Արծրունու	առաջատար գիտաշխատող	կգթ	93000
28	Մայիլյան Կարինե Ռաֆիկի	ավագ գիտաշխատող	կգդ	105000
29	Մկրտչյան Գոհար Մարատի	ավագ գիտաշխատող	կգթ	105000
30	Գազարյանց Մարինա Գուրգենի	ավագ գիտաշխատող	կգթ	96000
31	Աբրոյան Լիանա Օնիկի	ավագ գիտաշխատող	կգթ	95000
32	Զախարյան Ռոբսանա Վլադիսլավի	ավագ գիտաշխատող	կգթ	90000
33	Առաքելովա Էլինա Ալեքսանդրի	գիտաշխատող	կգթ	105000
34	Զավուշյան Անդրանիկ Ստեփանի	գիտաշխատող	կգթ	93000
35	Հայրապետյան Վարդուհի Հովհաննեսի	գիտաշխատող	կգթ	45000
36	Մարտիրոսյան Գևորգ Վոլոդյայի	գիտաշխատող	կգթ	22000
37	Սարգսյան Նատալյա Կոնստանտինի	գիտաշխատող	կգթ	95000
38	Գրիգորյան Ռուզաննա Միշայի	գիտաշխատող	կգթ	95000
39	Նեբիշ Աննա Անդրեյի	գիտաշխատող	կգթ	99000
40	Մելյան Գայանե Հրանտի	գիտաշխատող	կգթ	55000
41	Պողոսյան Լինա Հենրիկի	գիտաշխատող	կգթ	93000
42	Հակոբյան Լինա Հայրապետի	գիտաշխատող	կգթ	95000
43	Ոսկանյան Հենրիկ Եղիշեի	գիտաշխատող	ան.գթ	59900
44	Մեմերջյան Զառա Բաբկենի	գիտաշխատող	կգթ	82500
45	Հովհաննիսյան Ալվարդ Իլիասի	գիտաշխատող	կգթ	55000
46	Պողոսյան Դավիթ Ալբերտի	գիտաշխատող	կգթ	105000
47	Ներսիսյան Լիլիթ Ռոբերտի	գիտաշխատող	կգթ	38000
48	Ղազարյան Գայանե Սուրենի	գիտաշխատող	կգթ	93500
49	Զանգինյան Հասմիկ Վլադիմիրի	գիտաշխատող	կգթ	93500
50	Ղազարյան Հովսեփ Կարապետի	գիտաշխատող	կգթ	55000
51	Ստեփանյան Անի Սմբատի	գիտաշխատող	կգթ	105000
52	Ավետյան Դիանա Գագիկի	գիտաշխատող	կգթ	105000
53	Առաքելով Գրիգոր Գալուստի	գիտաշխատող	կգթ	105000
54	Մկրտչյան Մխիթար Սամվելի	գիտաշխատող	կգթ	46500
55	Հովհաննիսյան Անահիտ Արմենի	գիտաշխատող	կգթ	110000
56	Հակոբյան Աստղիկ Վարդանի	գիտաշխատող	կգթ	110000
57	Ավետիսյան Աիդա Մերգելի	գիտաշխատող		93500
58	Առաքելովա Կարինե Ավետիքի	գիտաշխատող		93500
59	Ներսիսյան Նարեկ Հրաչյայի	կրտսեր գիտաշխատող	կգթ	50000
60	Իզմաիլյան Ռոզա Արտաշեսի	կրտսեր գիտաշխատող	կգթ	95000
61	Արզումանյան Հրանուշ Հարությունի	կրտսեր գիտաշխատող	կգթ	50000
62	Ավագյան Հրանուշ Ռոբերտի	կրտսեր գիտաշխատող	կգթ	95000
63	Բայրամյան Նանե Վաչեի	կրտսեր գիտաշխատող	կգթ	95000
64	Աճեմյան Սոֆի Արմանի	կրտսեր գիտաշխատող	կգթ	79400
65	Դավթյան Հասմիկ Հենրիկի	կրտսեր գիտաշխատող		50000

66	Մելքոնյան Անի Հայկի	կրտսեր գիտաշխատող		85000
67	Թադևոսյան Գոհար Լյովայի	կրտսեր գիտաշխատող		93000
68	Խոնդկարյան Լուսինե Հերբերտի	կրտսեր գիտաշխատող		100000
69	Ապրեսյան Լիլիթ Սահակի	կրտսեր գիտաշխատող		93000
70	Պետրոսյան Մարիամ Սամվելի	կրտսեր գիտաշխատող		50000
71	Մարտիրոսյան Անուշ Արամի	կրտսեր գիտաշխատող		100000
72	Մարգարյան Սոնա Մովսեսի	կրտսեր գիտաշխատող		100000
73	Աբրահամյան Աստղիկ Աբրահամի	կրտսեր գիտաշխատող		98000
74	Զախարյան Մագդալինա Կարենի	կրտսեր գիտաշխատող		100000
75	Անտոնոսյան Մարիյա Ալիկի	կրտսեր գիտաշխատող		100000
76	Հակոբյան Սիրաս Աշոտի	կրտսեր գիտաշխատող		100000
77	Սահակյան Հարություն Կարապետի	կրտսեր գիտաշխատող		95000
78	Ադամյան Նարեկ Հաբետի	ավագ լաբորանտ- հետազոտող		50000
79	Օսիպով Օսիպ Վալերիի	ավագ լաբորանտ- հետազոտող		46500
80	Հարությունյան Քրիստինե Մուրենի	ավագ լաբորանտ- հետազոտող		100000
81	Անտոնյան Շուշանիկ Արթուրի	ավագ լաբորանտ- հետազոտող		95000
82	Ալխազյան Մարիամ Մարտինի	ավագ լաբորանտ- հետազոտող		46500
83	Արաբյան Էրիկ Արմենի	ավագ լաբորանտ- հետազոտող		100000
84	Նիկողոսյան Մարիյա Արմենի	ավագ լաբորանտ- հետազոտող		100000
85	Դավթյան Արմինե Նորայրի	ավագ լաբորանտ- հետազոտող		50000
86	Առաքելով Վահրամ Գալուստի	ավագ լաբորանտ- հետազոտող		95000
87	Խանոյան Դոնարա Ռաֆիկի	ավագ լաբորանտ- հետազոտող		50000
88	Հակոբյան Սոնա Արմենի	ավագ լաբորանտ		40000
89	Գասպարյան Սեդա Սամվելի	ավագ լաբորանտ		46500
90	Հակոբյան Թամարա Արսենի	ավագ լաբորանտ		46500
91	Բուրջախյան Հոփսիկ Առաքելի	ավագ լաբորանտ		23000
92	Գևորգյան Կարինե Ռաֆայելի	քաղաքաշտպանության շտաբի պետ		47000
93	Ղամբարյան Էդիկ Մարոյի	պարետ, վարորդ- մատակարար		138000
94	Հարությունյան Համլետ Սարգսի	ինժեներ-էլեկտրիկ		93000
95	Եգիկյան Գրիգորի Շավարշի	գլխավոր ինժեներ		115000
96	Ալեքսանյան Միշա Հայկազի	գազաեռակցող		50000
97	Հովակիմյան Ռոբերտ Գրիգորի	բանվոր		93000
98	Կիրակոսյան Դավիթ Աշոտի	բանվոր		93000
99	Բասեյան Արթուր Ասատուրի	պահակ		93000
100	Աղզաշյան Ռոբերտ Արխոյի	պահակ		93000
101	Զավադյան Ժորա Ավագի	պահակ		93000
102	Ղազանջյան Միհրան Գևորգի	պահակ		93000
103	Հովակիմյան Երանուհի Խաչիկի	մաքրուհի		93000
104	Աբաջյան Ալվարդ Գրիգորի	մաքրուհի		93000
105	Հովակիմյան Վարդուհի	մաքրուհի		93000




	Ռոբերտի			
106	Հովհաննիսյան Կարեն Մարտիրոսի	կենդանանոցի բանվոր		93000
107	Բաղդասարյան Արմեն Արտյոմի	վերելակների սպասարկող		60500
108	Ղալեչյան Մարտիկ Հրաչիկի	հնոցապան		93000
Ընդամենը				<b>9970800</b>

Կազմակերպության  
սնօրեն՝

  
(ստորագրություն)

(Արմեն Առաքելյան)

Կազմակերպության  
անձնակազմի կառավարման  
բաժնի պետ՝

  
(ստորագրություն)

(Գոհար Մելիքսեթյան)

